«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի պրոֆեսորի
02.04.2019 թ. թիվ 205 Լ/Կ հրամանի

Որակի ապահովման ինքնագնահատման և վերանայման կանոնակարգ և ընթացակարգ

Մշակող մարմին՝ ՎՊՀ ՈԱԿ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ «3» 28.03.2019թ.

Վանաձոր
2019թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վանաձորի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) որակի ներքին ապահովման (այսուհետ՝ ՈՆԱ) ինքնագնահատման և վերանայման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) մշակվել է համաձայն «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության, Համալսարանի 2014-18թթ. զարգացման հայեցակարգի, Համալսարանի Որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) հայեցակարգի, «Որակի քաղաքականության», Համալսարանում իրականացվող ՈԱ-ին վերաբերող փաստաթղթերի պահանջների՝ հաշվի առնելով «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ՈԱ չափանիշներ և առաջարկներ»-ի դրույթները:

2. ՈԱ մշակույթի ձևավորման գործընթացին զուգահեռ առաջ են գալիս մարտահրավերներ, որոնք ենթադրում են նոր մոտեցումներ, վերանայված մեխանիզմներ: Համալսարանի ՈՆԱ ինքնագնահատման և վերանայման քաղաքականությունը ուղղված է համալսարանի ՈԱ համակարգի բարելավմանը, կատարելագործմանը և զարգացմանը, որը ներառվում է որակի ամբողջական համակարգում՝ ապահովում, կառավարում, գնահատում, բարելավում: Այս փաստաթուղթը նկարագրում է համալսարանի ՈՆԱ ինքնագնահատման և վերանայման կարգը, դրա դերը ՈԱ քաղաքականության և շարունակական բարելավման գործընթացներում:

3. ՈՆԱ ինքնագնահատումը վարչական տվյալների համակարգված հավաքման գործընթաց է, որով գնահատվում է ՈԱ ստանդարտների, նպատակների իրականացման փաստական որակը: Վերանայման արդյունքում որոշում է ընդունվում գործողությունների շարունակական նպատակահարմարության կամ փոփոխությունների կատարման վերաբերյալ:

4. Համալսարանի ՈՆԱ ինքնագնահատման և վերանայման նպատակն է՝

- Բարելավել ՈԱ համակարգը,
- Գնահատել ՈԱ միջազգային չափանիշների հետ համալսարանի որակի կառավարման աշխատանքի համապատասխանությունը,
- Արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը,

- Կատարելագործել ՈԱ ռազմավարության, քաղաքականության, ընթացակարգերի, չափորոշիչների վերլուծության, վերանայման և բարելավման մեխանիզմները, դրանով իսկ նպաստելով մատուցվող ծառայությունների կատարելագործմանը, զարգացմանը, բարելավմանը ու արդիականացմանը,
- Վերհանել և նվազեցնել ՈՆԱ ռիսկերը:

5. ՈՆԱ համակարգի ինքնագնահատման և վերանայման խնդիրներն են՝
- Կատարել ՈԱ աշխատանքների և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ամփոփում, վերլուծություն,
- Նախաձեռնել վերլուծությունից բխող փոփոխություններ,
- Համակողմանի գնահատել որակի համակարգի աշխատանքի փաստացի որակը և ռեսուրսային ապահովվածությունը,
- Ուսումնասիրել որակի համակարգում ներգրավված անձանց կարծիքը,
- Վերագնահատել ՈԱ դերը, արդիական խնդիրներին ուղղված աշխատանքները,
- Հիմնավորել ՈԱ աշխատանքների շարունակականությունը, վերափոխումների նպատակահարմարությունը:

6. ՈՆԱ ինքնագնահատման և վերանայման գործընթացը կազմվել է գործընթացային մոտեցմամբ՝ ըստ Դեմինգ – Շուխարտի ՊԻՍԲ շրջափուլի:

7. Համալսարանի ՈՆԱ ինքնագնահատման և վերանայման գործընթացի հիմքում դրված են հետևյալ սկզբունքները՝
- համակարգային, կենտրոնացված կանոնակարգման,
- գործընթացների ապակենտրոնացված իրականացման,
- արժանահավատ գնահատման,
- որակի շարունակական բարձրացման միտումով բարելավման մոտեցումներ:

8. ՈՆԱ ինքնագնահատման և վերանայման ընթացակարգը կարևոր և անհրաժեշտ փաստաթուղթ է համալսարանի գործունեության համար, մասնավորապես՝
- Կարիքների բացահայտման,
- Պլանավորման, նպատակների սահմանման, բարելավման,
- Ռեսուրսների նպատակային բաշխման,
- Հետադարձ կապի ապահովման համար:

II. ՈՆԱ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ

1. ՈՆԱ համակարգի վերանայումը որակի գնահատման (վերանայում, չափում, համեմատում) մի մասն է: ՈԱ համակարգի վերանայման գործընթացը երաշխավորում է, որ բազմակողմանի վերանայումը իրականացվում է միջազգային չափանիշներին համապատասխան: Ինքնագնահատումն ու վերանայումը վերաբերում է Համալսարանի տարբեր գործընթացներում ներգրավված մարդկանց, որոնք կարևոր դերակատարում ունեն Համալսարանի բարելավման գործում՝ հատկապես ներքին շահակիցների՝ ուսանողների կրթական ուսումնական գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու գործում:

2. ՈՆԱ համակարգի ինքնագնահատումը և վերանայումը ենթադրում է հետևյալ քայլերի հաջորդականություն (տե՛ս՝ հավելված 5)՝

I. ՈՆԱ ինքնագնահատումը կատարվում է ՈԱԿ և Որակի ապահովման ֆակուլտետային աշխատախմբերի (այսուհետ՝ ՈԱՖԱ) տարեկան հաշվետվությունների հիման վրա՝ ըստ աշխատանքային պլանի: ՈԱ ինքնագնահատումը կազմվում է 2 տարին մեկ անգամ: Աշխատանքները ամփոփվում են ինքնագնահատման փաստաթղթի մեջ ՈԱԿ-ի, ՈԱՖԱ-ի և համալսարանի ռեկտորի կողմից (տե՛ս՝ հավելված1,2,3):

II. Ինքնագնահատումը իրականացվում է հետևյալ փուլերով.

- Նախապատրաստում՝ աշխատախմբի անդամների նշանակում և նրանց պարտականությունների, ժամկետների որոշում,
- Հաշվետվությունների ներկայացումներ, քննարկումներ,
- Աշխատանքային խմբի կողմից հաշվետվությունների ինքնագնահատում,
- Ինքնագնահատման արձանագրության կազմում:

III. Վերանայման գործընթացը իրականացվում է համաձայն ռիսկերի գնահատման, դրանց մեղմացման գործողությունների (տե՛ս՝ հավելված 4):

IV. ՈՆԱ միջանկյալ վերանայումը կարող է կատարվել ըստ հիմնավոր անհրաժեշտության՝ առանց ինքնագնահատման գործընթացի:

V. ՈՆԱ վերանայման համար ձևավորվում է նոր աշխատանքային խումբ կամ գործում է ինքնագնահատման աշխատանքային խումբը:

VI. Քաղաքականությունների և ընթացակարգերի վերանայումը պետք է կազմակերպվի ըստ բուհի ռազմավարության փոփոխության, ՈՆԱ ինքնագնահատման արդյունքում որոշված չափանիշների վերանայման որոշման, ՈԱԿ-ի կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների,

ներկայացված առաջարկությունների, շահակիցների կարծիքների և աշխատաշուկայի պահանջների:

VII. ՈՆԱ վերանայման ավարտին աշխատանքային խումբը կարող է ընդունել՝

- փոփոխությունների կատարման որոշում՝ բարելավման ծրագրի կազմմամբ,
- առանց փոփոխությունների կատարման որոշում:

VIII. ՈՆԱ վերանայման արդյունքում փոփոխությունների կատարման որոշման դեպքում հաջորդող 5-6 շաբաթվա մեջ կազմվում է բարելավման ծրագիր: Պատրաստվում են գործողություններ և ելակետային նպատակադրումներ, որտեղ անդրադառնում են այն հիմնահարցերին, որոնք կարող են առավել մեծ դրական ազդեցություն ունենալ համալսարանի վրա: Բարելավման պլանի կազմման արդյունքում պարզ են դառնում ՈԱԿ, ՈԱՖԱ տարեկան աշխատանքային պլանով նախատեսվող աշխատանքների ուղղությունները:

Հավելված 1

ՈՍՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆՈՒ /> ԱՆՈՒ

ցանկությունների հիմունքով

ՈՍՈՒ հիմքում դրված/կատարված/կիրառված մեթոդներ

Ա. Ո. Ա <	Գնահատում	Սովորողների ցանկություններ
1.		
2.		
3.		
...		

Հավելված 2

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

1. Պատրաստվեց_____

2. Ամսաթիվ_____

Չափանիշներ		Կատարված աշխատանքներ	Արդյունքներ
1.	Որակի ապահովման ռազմավարություն, քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր ու չափորոշիչներ		
2.	Ծրագրերի և որակավորումների հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման պաշտոնական ընթացակարգեր		
3.	Ուսանողների գնահատման հետևողականորեն կիրառվող և հրապարակված չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր		
4.	Դասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ		
5.	Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ		
6.	Ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պատշաճ տեղեկատվության հավաքում, վերլուծում և օգտագործում		
7.	Ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերաբար հրապարակում		

Հավելված 3

ՈՆԱ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ/ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

1. Պատրաստվեց_____

2. Ամսաթիվ_____

	Չափանիշներ	Ինքնագնահատման աշխ. խմբի գնահատական	Ենթակա վերանայման
8.	Որակի ապահովման ռազմավարություն, քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր ու չափորոշիչներ		☐
9.	Ծրագրերի և որակավորումների հաստատման, ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման պաշտոնական ընթացակարգեր		☐
10.	Ուսանողների գնահատման հետևողականորեն կիրառվող և հրապարակված չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր		☐
11.	Դասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ		☐
12.	Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ		☐
13.	Ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պատշաճ տեղեկատվության հավաքում, վերլուծում և օգտագործում		☐
14.	Ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերաբար հրապարակում		☐

Ինքնագնահատման համար պետք է գնատել 1-5 միավորի սահմանում՝ 1-ը նվազագույն, 5-ը առավելագույն միավոր:
«Ենթակա վերանայման» սյունակում պետք է նշում կատարել վանդակի մեջ՝ ըստ անհրաժեշտության:

Հավելված 4

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

1. Պատրաստվեց_____

2. Ամսաթիվ_____

N	Ռիսկի նկարագիր	Ռիսկի առաջացման հավանականության գնահատական	Ռիսկի տեղի ունենալու հետևանքով ազդեցության գնահատական	ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
	Միջին թվաբանական			

Հավելված 5


Գոծոխություն
չի պրվում
Վերանայում
Ուսումնասիրում
Բարելավման
ծրագիր
Տարեկան
հաշվեհաշվություններ
Աշխատանքային
պլան
Իրականացվող
տարեկան
աշխատանքներ